ՀՄԱՅԱԿ ՀԱԿՈԲՅԱՆ. ՆԱՏՅՈՒՐՄՈՐՏԻ ՎԱՐՊԵՏԸ

Արմինե Պետրոսյան

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հայցորդ
ՀՀ, Երևան, Մարշալ Բաղրամյան 24 գ
Էլ. հասցե՝ armine.pet21@mail.ru
Հոդվածը ներկայացվել է 20.03.2020, գրախոսվել է 20.03.2020, ընդունվել է տպագրության 03.11.2020

Ներածություն

Նատյուրմորտի[1] ժանրը կերպարվեստում կարելի է բնորոշել հետևյալ ձևակերպմամբ՝ անշարժ, անշունչ առարկաների պատկերում: Դրանք կարող են լինել պտուղներ, բանջարեղեն, ծաղիկներ, կենցաղային առարկաներ, նկարչական պարագաներ, անկենդան ֆաունա, գործիքներ, հագուստ ու զանազան այլ իրեր, և քանի որ առարկայական աշխարհը բազմազան է, նկարիչը ստեղծագործելու լայն հնարավորություններ ունի:

Արվեստաբան Ս. Բուրինին, քննելով նատյուրմորտի առանձնահատկությունները և համադրելով այդ ժանրը դիմանկարի հետ, նշում է, որ նատյուրմորտը և բնանկարը հակադիր ժանրեր են, որոնք արտահայտում են աշխարհի երկու հակաթեզեր. նատյուրմորտը կապված է միկրոկոսմի հետ, իսկ բնանկարը՝ մակրոկոսմի[2]: Նատյուրմորտի «անշարժությունը» ժխտում է շարժումը, այսինքն՝ այն տարրը, որը պետք է ապահովի ժամա-

---

[1] **Նատյուրմորտ** (ֆր. nature morte - մեռած բնություն) անգլերեն նշանակում է still-life («լուռ», «անխոս» կամ «անշարժ»): Այս եզրույթի ծագումը առանչվում է հոլանդերենում «stilleven» («հանգիստ կյանք»)(1650 թ.) բառակապակցության հետ, որը համապատասխանում է լատիներենում *nature morte* արտահայտությանը. *morte* բառի առկայությունը «stilleven» եզրույթի լատիներեն թարգմանության մեջ հանգեցրեց այն իրողությանը, որ այդ ժանրին վերագրում էին բացասական երանգ այնպիսի «կենդանի» ժանրերի համեմատությամբ, ինչպիսիք են դիմանկարը և պատմական ժանրը (Бурини 2014, 147): Նատյուրմորտի մոտիվները գոյություն են ունեցել դեռևս հինարևելյան, անտիկ, միջնադարյան, հին չինական և ճապոնական արվեստում: Նատյուրմորտը՝ որպես հաստոցային գեղանկարչության ժանր և նրա **խաբկանք** (trompe-l'oeil), սկզբնավորվել է իտալացի գեղանկարիչ Յակոպո դե Բարաբարիի «Նատյուրմորտ» (1504 թ.) աշխատանքով: XVIII դ. այդ ժանրի ակնառու ներկայացուցիչ է ֆրանսիացի նկարիչ Ժան Բատիստ Շարդենը: XIX դ. նատյուրմորտի սահմանները իր գործերով ընդարձակել է Վինսենտ վան Գոգը, իսկ XX դ.՝ Պաբլո Պիկասոն, Ջորջո Մորանդին, Դավիդ Սիկեյրոսը, Կուզմա Պետրով-Վոդկինը և այլք (Հայկական սովետական հանրագիտարան 1982, 197-198):

[2] Лотман 1986, 12.

նակի և տարածության միասնությունը: Նատյուրմորտի առաջին պլանում պատկերվում են իրերը՝ իրենց միկրոկոսմում, որոնք, ինչպես բեմում, հանդես են գալիս գործող անձերի դերերում: Ս. Բուրինիի այս հատկանշական միտքը ասես ամփոփում է Յու. Լոտմանի դիտարկումը. «Սյուժետային կտավում իրերն այնպիսի վարքագիծ են դրսևորում, ինչպես թատրոնում, իսկ նատյուրմորտում՝ ինչպես կինոյում, այսինքն՝ խաղում են»[3]:

Այս ժանրում տարածությունը բացահայտում է իրերի միջև գոյություն ունեցող կապը: «Խիստ կարևոր է նատյուրմորտի «լռությունը», որն ստեղծում է իրերի յուրահատուկ անսամբլ», - գրում է Յու. Լոտմանը[4]:

«Իրերի աշխարհը մի ամբողջ տիեզերք է... որտեղ իրերն իրերի լեզվով են փոխգործակցում ու շփվում միմյանց հետ», - նշել է ռուս գեղանկարիչ Կ. Պետրով-Վոդկինը[5]: Ի տարբերություն այլ ժանրերի՝ այստեղ ստեղծագործողը կերտում է արհեստական իրականություն, որը որոշակիորեն փոփոխել է ինքը. այն, ինչ շարժվում ու ապրում է, այստեղ դառնում է անկենդան՝ նմանվելով իրերին: «Ծաղիկները, որպեսզի դառնան նատյուրմորտի մի մասը, պետք է քաղվեն կամ կտրվեն, մրգերն ու բանջարեղենը նույնպես պետք է քաղված լինեն, թռչունը պետք է լինի արդեն անկենդան, այլ խոսքով՝ նատյուրմորտը իրերի այնպիսի մի աշխարհ է, որին միջամտել է մարդը»[6]: Սրանով է տարբերվում նատյուրմորտը բնանկարից. նատյուրմորտի աշխարհն անշարժության աշխարհն է, մինչդեռ բնանկարը պատկերում է այն շարժման մեջ:

Նատյուրմորտում իրերը պատկերված են առաջին պլանում, որը հնարավորություն է ընձեռում դիտելու առարկաները մանրամասնորեն: Այդ իսկ պատճառով յուրաքանչյուր նատյուրմորտ կարող է կրել և կրում է որոշակի տեղեկատվություն: Օրինակ՝ XVII դ. գեղանկարչության մեջ լայնորեն տարածված էր vanitas նատյուրմորտը, որն ուներ խորհրդանշական բնույթ, քանի որ ընդգրկում էր խորհրդանիշների որոշակի շերտ. իրերի կարգավորվածությունը նկարում յուրօրինակ գաղտնագիր էր, որը մատնանշում էր իմաստային պլան, ուստի, կոմպոզիցիոն նշանակությունից բացի, այն ուներ իմաստաբանական նշանակություն: Այլ կերպ ասած՝

[3] Лотман 1986, 12.
[4] Лотман 1986.
[5] Бурини 2014, 150.
[6] Бурини 2014, 151.

նատյուրմորտում իրերը կարող են ձեռք բերել գերագույն նշանակություն: Ինչպես հոլանդացի փիլիսոփա Բ. Սպինոզան է նշել իր «Բարոյագիտություն» աշխատության մեջ, - «Իրերի դասավորությունն ու կապը նույնն են, ինչ մտքերի դասակարգումն ու կապը»[7]: Ելնելով Ֆ. Նիցշեի պատկերավոր խոսքից («Մարդն արտացոլվում է իրերի մեջ»)՝ կարելի է ասել, որ ստեղծագործողի աշխարհընկալումը ցայտուն կերպով արտահայտվում է նատյուրմորտի ժանրում[8]:

Որպես մշակույթի ինքնատիպ երևույթ՝ նատյուրմորտն արտացոլում է դարաշրջանը և ունի նաև ազգային գծեր ու հատկանիշներ: Սիլվիա Բուրինիի մեկնաբանությամբ՝ նատյուրմորտի ժանրը իրերի «այբուբենն է» և աշխարհի յուրօրինակ մոդելը[9]:

Ընդհուպ XIX դ. վերջը գեղանկարչական ժանրային աստիճանակարգում նատյուրմորտը զբաղեցնում էր ամենաստորին սանդղակը: Միայն XX դ. սկզբին այդ ժանրի հանդեպ նկատվեց մեծ հետաքրքրություն: Ահա թե ինչ է գրում այդ երևույթի մասին ռուս արվեստաբան Ա. Յագոդովսկայան. «Աշխարհի բանաստեղծականորեն ընկալման նոր ձևերի, միջոցների որոնումը ամենացայտուն արտահայտումը ստացավ բնանկարի և նատյուրմորտի ժանրում: Առարկայական... միջավայրի պատկերի, բնության և իրերի ստեղծագործական մեկնաբանման մեջ նկարիչները փորձում էին մարմնավորել իրենց պատկերացումները կյանքի համապարփակ արժեքների մասին, որն արտահայտվում էր ոճական տարբեր ուղղություններում»[10]:

Ինչպես բնանկարը, այնպես էլ նատյուրմորտը սյուժեից զուրկ ժանրեր են, սակայն երկուսն էլ համարվում են գեղանկարչության «ինքնատիպ լաբորատորիա», քանի որ, դիմելով այդ ժանրերին, նկարիչները ձգտել են բացահայտել սեփական աշխարհըմբռնումը և ժամանակը բովանդակային տեսանկյունից՝ առանձնահատուկ ուշադրություն ցուցաբերելով անձի, նրա հոգևոր աշխարհի թաքնված շերտերի նկատմամբ:

Հայ արվեստում նատյուրմորտի մոտիվներն արտացոլվել են նաև միջնադարյան մանրանկարչության մեջ. դրան առաջին անգամ դիմել է նկարիչ Մինասը (XVII դ.): Նատյուրմորտը՝ որպես ժանր, մեզանում վերջ-

[7] Спиноза 2012, Бурини 2014, 157.
[8] Бурини 2014, 157.
[9] Бурини 2014, 153.
[10] Ягодовская 1987, 27.

նականապես ձևավորվել է XIX դ. վերջին: Այս ժանրի նշանավոր ներկայացուցիչն ու հիմնադիրը ֆրանսահայ նկարիչ Զ. Զաքարյանն է: XX դարում նատյուրմորտը զարգացում է ստացել Վ. Սուրենյանցի, Հմ. Հակոբյանի, Ե. Թադևոսյանի, Գ. Գրիգորյանի, Հ. Կոջոյանի, Վ. Գայֆեջյանի, Մ. Աբեղյանի, Է. Իսաբեկյանի, Հ. Զարդարյանի, Մ. և Ե. Ասլամազյանների, Մ. Սարյանի և այլոց արվեստում:

Հմ. Հակոբյանի նատյուրմորտները

Հմայակ Հակոբյանը XIX դ. վերջի – XX դ. սկզբի հայ ռեալիստական գեղանկարչության ակնառու ներկայացուցիչներից է:

Հմայակ Հակոբյանը (1871-1939) ստեղծագործել է գրեթե բոլոր ժանրերում, սակայն նատյուրմորտի հանդեպ ունեցել է յուրահատուկ հետաքրքրություն: Նկարիչը ստեղծել է ուշագրավ գործեր՝ այդ ժանրում նույնպես բացահայտելով իր ստեղծագործական ողջ ներուժն ու կարողությունները: Հմ. Հակոբյանի նատյուրմորտներում հստակ արտացոլվում են Մյունխենի գեղարվեստի ակադեմիային բնորոշ ստեղծագործական մեթոդները (նատուրալիստական ոճ, մութ լուսաստվերներ), դրա հետ մեկտեղ այստեղ առկա են նաև ինչպես սալոնային ակադեմիզմի, այնպես էլ ռոմանտիզմի և իդեալիզմի որոշ դրսևորումներ: Միաժամանակ, Հմ. Հակոբյանը ներմուծում է այդ ժանր ազգային ավանդույթներին հատուկ գծեր (գունային առումով, իրերի և մրգերի ընտրությամբ)՝ ստեղծելով իր արվեստի մշակութապատմական համատեքստը:

Նրա նատյուրմորտներում «թաքնված է» զգացմունքների մի խորքային շերտ՝ մելամաղձոտության, տխրության ու միայնության մոտիվներ, որոնք նրբորեն միահյուսվում են պատկերվածին. դա արտահայտված է կտավների գունապնակում: Հմ. Հակոբյանի նատյուրմորտների գեղարվեստական աշխարհն արտացոլում է նկարչի գեղագիտական իդեալները, մտքի և զգացմունքի ներդաշնակությունը:

Նկարիչը, ձգտելով արտաքին նմանության, միևնույն ժամանակ, փորձում է պատկերել ոչ միայն առարկան, այլև առարկայից ստացած տպավորությունը: Ռուս արվեստաբան Բորիս Վիպպերի կարծիքով՝ «այն, որ նատյուրմորտը առարկան «դուրս է բերում» կյանքից, մարդկային հա-

բաբերություններից, նշանակում է, որ նա մեզ տալիս է մի բան, որը արժևորվում է միայն գեղարվեստական ձևով»[11]:

Թեև նատյուրմորտը ամենից քիչ գաղափարականացված ժանրերից է, այնուամենայնիվ, Հմ. Հակոբյանի աշխատանքներն ունեն կյանքի ու աշխարհի նկատմամբ ձևավորված աշխարհայացքային հենք:

Նատյուրմորտներում պատկերված առարկաների ընտրությունը և դրանց մեկնաբանումը անմիջական կապ ունեն գեղանկարչի առջև դրված նպատակի հետ: Հատկանշական է նրա նատյուրմորտների կառուցվածքը: Ծավալային իրերն զբաղեցնում են նկարի կենտրոնական հատվածը: Առարկաների կարգավորվածությունն ընկալվում է իբրև մեկ ամբողջություն, որի շուրջ Հմ. Հակոբյանը ստեղծում է տարածություն: Նրա նատյուրմորտների անբաժան մասն են մրգերը և բանջարեղենը: Նկարչի համար կարևոր են ոչ միայն գիծն ու ձևը, այլև գունեղությունը, որը գրեթե միագույն է՝ շագանակագույն և դարչնագույն երանգների գերիշխանությամբ:

Իրերը դադարում են լինել նկարչի վրձնի վերարտադրման առարկա. դրանք կարծես նկարի համատեքստում կենդանանում են և ապրում իրենց կյանքով: Հմ. Հակոբյանի արվեստում առկա է մարդու և իրերի միջև ստեղծված անտեսանելի կապը, որը կրում է կենսափիլիսոփայական բնույթ: Այս առումով հետաքրքիր է Միխայիլ Էպշտեյնի միտքը. «Լսել իրերի մեջ թաքնված ձայնը… նշանակում է հասկանալ, ճանաչել դրանք…»[12]:

Վերլուծելով գեղանկարչի արվեստի առանձնահատկությունները՝ արվեստաբան Ա. Աղասյանը նկատում է. «Հմ. Հակոբյանի առավել հաջողված աշխատանքները նրա փոքրաչափ նատյուրմորտներն են, որոնցում նա պատկերել է կենցաղային, հասարակ իրեր, իսկ ավելի հաճախ՝ պտուղներ, մրգեր ու բանջարեղեն («Մրգեր» (1901), «Նռներ» (1902), «Պատկառուկ» (1910) և այլն): Շագանակագույն մուգ ֆոնի վրա պայծառ գույների նուրբ երանգներով, լուսաստվերի կենսառատ խաղով ու վրձնի ազատ, լայն շարժումներով կատարված այս նկարչագեղ աշխատանքներն էտյուդային թարմ ու կենսառատ, թեև «անավարտ» տպավորություն են թողնում և այդ առումով տարբերվում Զ. Զաքարյանի երկար մտածված, մինչև վերջ հղկված նատյուրմորտներից»[13]: Ա. Աղասյանի այս

[11] Виппер 2005, 75.
[12] Мочалов 2012, 565.
[13] Աղասյան 2009, 55:

Նկ. 1. Նատյուրմորտ, կտավ, յուղաներկ, 40x27 սմ, ՎԱԹ

Նկ. 2. Նատյուրմորտ, ստվարաթուղթ, յուղաներկ, 48,5x70 սմ, ՎԱԹ

Նկ 3. Նատյուրմորտ. Բանջարեղեն (1901), կտավ, յուղաներկ 31,5x49,5 սմ, ՀԱՊ



Նկ. 4. Նատյուրմորտ (1901), կտավ, յուղաներկ, 100x71 սմ, ՀԱՊ

Նկ. 5. Նատյուրմորտ. Դեղձեր, ստվարաթուղթ, յուղաներկ, 30,5x39 սմ, ՀԱՊ

Նկ. 6. Նատյուրմորտ. Մրգեր (1901), կտավ, յուղաներկ, 31x55 սմ, ՀԱՊ

յուրօրինակ, մասնագիտական դիտարկումը խիստ բնութագրական է Հմ. Հակոբյանի արվեստին:

Հմ. Հակոբյանի նատյուրմորտներին անդրադարձել է նաև Ռ. Շիշմանյանը, որի կարծիքով, նկարչի՝ այդ ժանրում կերտած գործերը հիշեցնում են Զաքար Զաքարյանի կտավները: Գեղանկարչի նատյուրմորտներն առանձնանում են գունապնակի երանգների շեշտադրումով ու յուրահատուկ լույսով, որով շաղախված է կտավը: Շարունակելով վերլուծությունը՝ Ռ. Շիշմանյանը նկատում է, որ Հմ. Հակոբյանի գործերում բացակայում են նյութականության խոր զգացումը և բարձր ճաշակը: Սակայն, մեր կարծիքով, նման տեսակետը որոշ չափով սուբյեկտիվ է և չի կարող ստվերել Հմ. Հակոբյանի բարձրաճաշակ արվեստը: Գուցե վերջինիս կտավները չեն առանձնանում պատկերված իրերի առատությամբ ու զանազանությամբ, բայց ստեղծագործողը խորն է զգացել դրանց նյութականությունը:

Ե. Մարտիկյանի համոզմամբ էլ ստեղծագործողը նրբորեն տիրապետում էր գույնի բյուրավոր երանգներին, «ճշգրիտ արտաբերում ռեֆլեքսները», վարպետորեն ընդհանրացնում մակերևույթները՝ ստեղծելով լույսով և օդով պարուրված կատարյալ ձևեր[14]:

Հմայակ Հակոբյանի նատյուրմորտները կարծես արտացոլում են առարկայի՝ որպես իրականության մասնիկի շոշափելիությունը:

Ուշագրավ է նաև արվեստաբան Վ. Հարությունյանի կարծիքը Հմ. Հակոբյանի նատյուրմորտների մասին: Նկարիչը իր տարերքի մեջ է, երբ նատյուրմորտ է պատկերում: Առարկաների իրական, նյութական ձևերն ու ծավալները նա կառուցում է արագ ու լայն վրձնահարվածներով, պայծառ գույներով, լուսաստվերային միջոցներով: Նատյուրմորտի վարպետը առավել արտահայտչականության է հասնում պատկերված առարկաների գունային կոլորիտին հակադրելով կտավի մուգ, չեզոք ֆոնը[15]:

Հայ գեղանկարչության մեջ նատյուրմորտի արժևորման առաջին փորձն է արել նկարիչ Ռ. Լորիս-Մելիքովը: Ուսումնասիրելով Հմ. Հակոբյանի բազմաժանր արվեստը՝ Լորիս-Մելիքովը շատ բարձր է գնահատել նրա նատյուրմորտները: Հայտնի է, որ հենց այդ ժանրում նկարիչը մեծ ազդեցություն է կրել ֆլամանդական դպրոցի ներկայացուցիչների, մասնավորապես Սնեյդերսի և Ֆեյտի արվեստից[16]: Հատկանշական է, որ

[14] Մարտիկյան 1983, 85:

[15] Հարությունյան 1948, ՀԱՊ, ֆ-83, Տ-1, թպ-2, տե՛ս նաև Էջմիածին 1948, 89:

[16] Ерзнкян 1999, 11.

Ֆ. Սնեյդերսի ու Յ. Ֆեյտի նատյուրմորտներն ավելի շատ հարում էին «կենդանի», քան «մեռած» բնությանը: Եվ այդ «ակտիվ» գիծը, որը բնորոշ էր ֆլամանդական դպրոցին, թափանցեց նաև Հմ. Հակոբյանի արվեստի մեջ («Բանջարեղեն» (1901), «Բանջարեղեն. կաղամբ», «Մրգեր» (1901-1912), «Նուռ» և այլն): Կարելի է մասնակի համակարծիք լինել Ռ. Լորիս-Մելիքովի հետ, որ Հմ. Հակոբյանի նատյուրմորտները վրձնած են բուն ֆլամանդական շքեղությամբ: Սակայն, ի տարբերություն Սնեյդերսի, դրանք ավելի փոքրածավալ են և աչքի են ընկնում կոմպոզիցիոն կարգավորվածությամբ, նրա կտավներում չկա ֆլամանդական արվեստին բնորոշ «անզուսպ դեկորատիվություն», և քանի որ նկարիչն ապրել է Թիֆլիսում, ուստի նրա արվեստում առկա են անդրկովկասյան իրականությանը հատուկ մոտիվներ[17]:

Այս ժանրը բարձր է գնահատել նաև ռուս արվեստաբան Լև Մոչալովը. «Հասկանալ նատյուրմորտը՝ նշանակում է հասկանալ գեղանկարչությունը», քանի որ այն «հաստատում է պատկերավորության առաջնայնությունը գեղարվեստում»[18]:

Հմայակ Հակոբյանի նատյուրմորտները

Հմ. Հակոբյանի նատյուրմորտների մեծ մասը թվագրված է 1901-ով: Ըստ արվեստաբան Ք. Ավետիսյանի հրատարակած կատալոգի[19]՝ նկարչի արվեստում նատյուրմորտի ժանրն ընդգրկում է 19 գեղանկար, 4 գրաֆիկական աշխատանք: Սակայն մեզ հաջողվեց ճշտել, որ Վրաստանի ազգային թանգարանում պահվում է ևս 3 նատյուրմորտ: Գեղանկարչի ստեղծագործությունների մի մասն էլ գտնվում են մասնավոր հավաքածուներում:

Ուշագրավ ստեղծագործություն է 1892 թ. վրձնած «Նատյուրմորտ ձեռագրերով» կտավը՝ նվիրված կաթողիկոս Խրիմյան հայրիկին: Այն նկարչի ուսանողական տարիների գործերից է: Նատյուրմորտն ունի դասական գեղանկարչությանը հատուկ կոմպոզիցիոն լուծում և աչքի է ընկնում լույսի ու ստվերի հավասարաչափ համադրությամբ[20]: Գեղանկարչորեն է պատկերված դեղին սաթից պատրաստված համրիչը, որը թե՛ գու-

[17] Ерзнкян 1999, 27.
[18] http://theatre.sias.ru/upload/2013_1-2_565-573-vodonos.pdf
[19] Հակոբյան 2012.
[20] Մարտիկյան 1983, 90:

նային, թե՛ կոմպոզիցիոն առումով լրացնում է պատկերը: Նշենք, որ Մատենադարանին պատկանող այս նատյուրմորտը 1955 թ. նվիրվել է Ավ. Իսահակյանին՝ ծննդյան 80-ամյակի առթիվ[21]:

«Նատյուրմորտ» (նկ. 1) կտավը գտնվում է Վրաստանի ազգային թանգարանում: Այն կերտված է նկարչի գունապնակին հատուկ և նախընտրելի՝ շագանակագույնի ու սրճագույնի երանգների համադրությամբ: Աշխատանքը կենցաղային ու առօրեական բնույթի է: Ընդհանուր ֆոնի մուգ գույները համադրվում են կարմիր և դեղնավարդագույն երանգների հետ: Կտավի ողջ ֆոնը սրճագույն է, իսկ կենտրոնական հատվածը ողողված է լույսով:

Հմ. Հակոբյանի վրձնին է պատկանում ևս մի կտավ՝ դարձյալ «Նատյուրմորտ» (նկ. 2) անվանումով: Չափսերով բավական մեծ այս կտավը պահվում է Վրաստանի ազգային թանգարանում: Առաջին պլանում պատկերված է մրգերի մի ամբողջ «աշխարհ»՝ երկու մասի բաժանված սերկևիլ, նուռ, տանձ, խաղող, իսկ նկարի խորքային հատվածում «թաքնված» է դեղձը: Վրձնահարվածներն անկաշկանդ են ու համարձակ:

Այստեղ նույնպես գերիշխում է ռեալիստական գեղանկարչությանը բնորոշ կոլորիտը, սակայն այն տարբերությամբ, որ երփնագրի քսվածքները էքսպրեսիվ են: Այս կոմպոզիցիայի լույսը ունի առանցքային նշանակություն, բայց կտավում բացակայում են օդային էֆեկտները, փոխարենը կա մի անտեսանելի լույս, որը, կարելի է ասել, իր հոգու արտացոլումն է:

Հմ. Հակոբյանը գեղանկարչական արտահայտչամիջոցներից նախընտրել է գիծն ու ֆորման, քանի որ կոլորիտը գրեթե միշտ միագույն է և ձուլվում է ֆոնին՝ դառնալով միասնական ամբողջություն: Սակայն այս ամենի հետ մեկտեղ գույնը մեծ ազդեցություն է թողնում դիտողի զգայական աշխարհի վրա:

«Նատյուրմորտ. Բանջարեղեն» (1901) (նկ. 3) կտավը պարզ է և միաժամանակ շատ խոսուն: Թվում է, թե նկարչին հատուկ՝ մուգ տոնային երանգներով պատկերված սոխերն ու եգիպտացորենները չեն կարող գեղագիտական հաճույք պատճառել դիտողին, սակայն Հմ. Հակոբյանը դրանց մեջ գտել է առանձնահատուկ գեղեցկություն: Այս կտավում ասես զգացվում է բանջարեղենի թարմությունը, բնական են պատկերված սոխերի կեղևների թափանցիկությունը, եգիպտացորենի ոսկեգույն հատիկ-

[21] Մարտիկյան 1983, 90:

ները, կախված մազմզուկները և բացված տերևները: «Նկարիչը ոչ միայն պատկերել է, այլև զգացել է դրանց համն ու հոտը: Հմ. Հակոբյանը ֆրանսիացի նկարիչ, ակադեմիկոս Ժան Բատիստ Շարդենի (1699-1779) նման առարկաները շրջապատել է օդային միջավայրով՝ առարկաներին տալով կենդանություն: Շարդենի պես նրա երփնագիրը առանձնանում է գունապատկերի ամբողջականությամբ, նրբերանգների և արտացոլումների հարստությամբ, վիրտուոզ խազերով»[22],- այսպես է բնութագրել նրա նատյուրմորտները Ե. Մարտիկյանը: Նկարչի՝ ի վերուստ տրված գունային զգացողությունը նշել է նաև Ռ. Լորիս-Միքայելյանը. «Հմայակ Հակոբյանը տոնալ և գունային երանգներն օգտագործում է առարկաները չոր ուրվագծերից «ազատելու» համար: Ասվածի վառ օրինակն է «Պտուղներ» (1901 թ.) կտավը, որտեղ նա Շարդենի նման «օգտվում է ներկերից, բայց նկարում է զգացմունքներով»[23]:

Հմ. Հակոբյանի 1901 թ. «Նատյուրմորտ» (նկ. 4) ստեղծագործությունը կարելի է անվանել «Մրգերի հրավառություն»: Երբ նայում ես կտավին, տպավորություն է ստեղծվում, որ երկնքից թափվում է մրգերի մի ամբողջ տեսականի՝ խաղող, նուռ, խնձոր, դեղձ, սեխ և այլն: Կտավը կերտված է շատ պրոֆեսիոնալ և համարձակ վրձնահարվածներով ու իրեն հատուկ շագանակագույնի, նաև դեղին, կանաչ, վարդագույն, տեղ-տեղ մանուշակագույն երանգների նուրբ անցումներով: Այդ մրգաբույլի յուրաքանչյուր պտուղ առանձնանում է իր գեղեցկությամբ, իսկ նկարի ֆոնը ձուլվում է մրգերի գույներին:

Ամենաուշագրավ գործերից մեկում՝ «Նատյուրմորտ. Դեղձեր» (նկ. 5), պատկերված են «կարմրաթուշ» դեղձեր: Այս կտավը «ճառագում է» ջերմություն, որը հաղորդվում է դիտողին: Հմ. Հակոբյանը մանրակրկիտ մոտեցմամբ և գունային համադրումով կտավը հասցրել է կատարելության: Դեղձերը այնքան բնական են պատկերված, որ կարծես հենց նոր ծառից քաղված ու դրված լինեն սեղանին:

Վարպետորեն է վրձնած «Նատյուրմորտ. Մրգեր» (1901) (նկ. 6) աշխատանքը, որում առկա են լույսի ու ստվերի ներդաշնակությունը, խաղողի շողշողուն հատիկների փայլն ու թափանցիկությունը, նռան հատիկների հյութեղությունը:

---

[22] Մարտիկյան 1983, 100:

[23] Հակոբյան 1948, 21-22, տե՛ս նաև Երզնկյան, Բաղդասարյան 2002, 57-58:

Կարելի է ասել, որ ստեղծագործական տարբեր շրջաններում, օգտագործելով բազում գուներանգներ, նկարչին հաջողվել է այդ որոնումների հորձանուտում հավատարիմ մնալ ռեալիզմի սկզբունքներին:

Եզրակացություններ

Այսպիսով, Հմ. Հակոբյանը հայ գեղանկարչության մեջ նատյուրմորտի հիմնադիրներից է: Նկարչի արվեստում նատյուրմորտի ժանրը ստացավ նոր՝ փիլիսոփայական-բանաստեղծական բովանդակություն: Նրբաճաշակ գեղանկարիչը ստեղծեց անկենդան աշխարհի՝ քաղված մրգերի, բանջարեղենի, ծաղիկների, կենցաղային առարկաների կենդանի պատկերը, մշակելով ուրույն ոճ՝ հիմնված իրեն հատուկ գունապնակի, լույսի ու ստվերի անկրկնելի ներդաշնակության վրա:

Գրականություն

Աղասյան Ա. 2009, Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում, Երևան, «Ոսկան Երևանցի», 292 էջ, 192 էջ նկար:

Երզնկյան Մ., Բաղդասարյան Ա. 2002, Կերպարվեստի բառագիրք, Երևան, «Զանգակ-97», 80 էջ:

Էջմիածին 1948 (7-9) Է-Թ, էջ 88:

Հայկական սովետական հանրագիտարան 1982, հ. 8, Երևան, ՍՍՀ հրատ., 720 էջ:

Հարությունյան Վ. 1948, Նկարիչ Հ. Հակոբյանի ցուցահանդեսը, ՀԱՊ, ֆ-83, Տ-1, թպ-2:

Հմայակ Հակոբյան (1871-1939) 1948, Հմայակ Հակոբյանի ստեղծագործությունների հետմահվան ցուցահանդեսի կատալոգ, ներածական հոդվածը Ռ. Լոռիս-Միքայելյանի, Երևան, ՀՊՊ հրատ., 90 էջ+11 նկ.:

Հմայակ Հակոբյան 1871-1939 2012, կատալոգ, Հայաստանի ազգային պատկերասրահ, Երևան, «Ասողիկ», էջ 89:

Շիշմանյան Ռ. 1958, Բնանկարն ու հայ նկարիչները, Երևան, «Հայպետհրատ», էջ 357:

Մարտիկյան Ե. 1983, Հայկական կերպարվեստի պատմություն, գիրք Գ, Երևան, «Սովետական գրող», 224 էջ, 34 թերթ ներդիր:

Бенедикт Спиноза 2012, Этика, Москва, изд. Азбука, 352 с.

Бурини С. 2014, Типология натюрморта в литературе (на материале XX века), Барнаул, с. 145-172, https://www.openstarts.units.it/bitstream/10077/2364/1/10.pdf (18.10.2020).

Виппер Б.Р. 2005, Проблема и развитие натюрморта, СПб., «Азбука-классика», 384 с.

Ерзнкян М. 1999, Натюрморт в творчестве художников Армении, канд. дисс., Ереван, 116 с.

Мочалов Л. 2012, Три века русского натюрморта, рецензия Ефима Водоноса на книгу Мочалова, Москва, «Белый город», с. 573, http://theatre.sias.ru/upload/2013_1-2_565-573-vodonos.pdf (01.11.2020).

Ягодовская А.Т. 1987, От реальности к образу. Духовный мир и предметно-пространственная среда в живописи 60-х-70-х годов, Москва, «Советский художник», 183 с.

Лотман Ю.М. 1986, «Вещь в искусстве», Материалы науч. конф. (1984), вып. 17, Москва, с. 6-14.

Veca A. 1990 La natura morta, Firenz:Giunti, 50 p.

ՀՄԱՅԱԿ ՀԱԿՈԲՅԱՆ. ՆԱՏՅՈՒՐՄՈՐՏԻ ՎԱՐՊԵՏԸ

Արմինե Պետրոսյան

Ամփոփում

Շատ նկարիչներ ստեղծագործական կյանքի ընթացքում դիմում են նատյուրմորտին: Հմ. Հակոբյանը նույնպես անդրադարձել է այդ ժանրին՝ իր ինքնատիպ մոտեցումներով:

Նկարչի նատյուրմորտներում հստակ արտացոլվել են գերմանական գեղանկարչությանը բնորոշ գեղարվեստական առանձնահատկությունները, ստեղծագործական մեթոդները, և այդ ամենը ներդաշնակորեն զուգակցվում է ազգային ավանդույթների հետ: Հայ կերպարվեստում Հմ. Հակոբյանը այս ժանրի կարկառուն ներկայացուցիչներից է: Նրա նատյուրմորտների առանձնահատկությունն այն է, որ հեղինակը առարկաների ու իրերի անկենդան աշխարհին կենդանություն է հաղորդել: Ուշագրավ են ոչ միայն Հայաստանի ազգային պատկերասրահում, այլև Վրաստանի ազգային թանգարանում պահվող նատյուրմորտները:

Բանալի բառեր՝ Հմայակ Հակոբյան, նատյուրմորտ, մրգեր, բանջարեղեն, ծաղիկներ, կենցաղային առարկաներ, կենդանիներ:

АМАЯК АКОПЯН – МАСТЕР НАТЮРМОРТА

Армине Петросян

Резюме

На определенном этапе творческой жизни большинство художников обращаются к жанру натюрморта. Жанр натюрморта нашел отражение и в творчестве Ам. Акопяна. В натюрмортах художника прослеживается приверженность традициям немецкой живописи, ее художественным особенностям, что гармонично сочетается с национальными художественными традициями. Особенность натюрмортов, созданных художником, состоит в том, что автор вдохнул жизнь в «бездыханный» мир вещей и предметов.

Ам. Акопян является одним из ярких представителей этого жанра в армянском изобразительном искусстве. Примечательны натюрморты, хранящиеся как в Национальной галерее Армении, так и в Национальном музее Грузии.

Ключевые слова – Амаяк Акопян, натюрморт, фрукты, овощи, цветы, предметы быта, фауна.

HMAYAK HAKOBYAN: THE MASTER OF STILL LIFE

Armine Petrosyan

Abstract

Most artists turn to the still lifegenre at some point in their lives. Hm. Hakobyan also focused on that genre with his original approaches. The still lifes of the artist clearly reflect the artistic features and creative methods typical to the German painting, all of which are harmoniously combined with national traditions.

The peculiarity of the still lifes created by the artist is that the author breathed life into the "breathless" world of things and objects.

Hm. Hakobyan is one of the outstanding representatives of this genre in the Armenian fine arts. Quite remarkable are the still lifes of the artist, which are kept both in the National Gallery of Armenia and in the National Museum of Georgia.

Key words – Hmayak Hakobyan, still life, fruits, vegetables, flowers, household items, animals.